



ՉԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ



(Ա. ՏԱՐԻ)

15 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1900

(ԹԻԻ 15)



ԲՈՎ Ա. Ն Դ Ա. Կ ՈՒԹԻԻՆ

Յեռագործ շահույթ. Երբևեկ Սրմաբեղիանյան. — Մասնուրբ ուրբ.
— Նախապատճարումներուն պատճառք, Ազգիս Վերածնունդը ուումանա-
հայոց մէջ, Գամեր Արշաւիր. — Գաղղակաւանները (1-4), Ե. Սրմաբեղիանյան.
— Կիսամտեակ:

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Շ Ա Ի Ի Ղ

Կը հրատարակուի ամէն ամսոյ 1ին եւ 15ին

Բ Ա ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Պուկարիոյ համար տարեկան 10 ֆր. , վեցամսեայ 5 ֆրանք :
Արտասահմանի » տարեկան 12 ֆր. , վեցամսեայ 6 ֆրանք :
Սմերիկայի » » 2 1/2 սոլար

“ՇԱԻԻՂ” ձեռքէ չի ծախուիր :

Բաժնեգին , նամակ , յօդուած , լրագիր և գիրք՝ պէտք է
ուզուին հետեւեալ հասցէին՝

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH

PENSIONNAT ARMENIEN

(Bulgarie)

VARNA

Չհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան :

Շառիդի մէջ յայտարարուելու համար խրկուած հրատա-
րակութիւնները պէտք է երկու օրինակ ըլլան :

ՇԱԽԻՂ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի

15 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1900

Թիւ 15

ՅԵՏԱԴԱՐՁ ԶԱՐԺՈՒՄ

Շաւիղի ներկայ թիւին մէջ հրատարակուած ուսման հասոյ թղթակցութիւնը այն ուրախառիթ աւետարներէն է որոնք յարատեւօրէն տառապող մեր ազգին գիմոցկնութեան նոր սգի մը կը ներշնչեն ու կը զրահեն զինքը նոր կորովով մը՝ գոյութեան անողոք ու անվախճան պայքարը տառջ քշելու համար անվհատ կերպով։ Ռուսմանիոյ հայկական վաղընջուց գաղթականութեան վրայ շատնց կատարուած էր հոգեհանգրստի արարողութիւնը։ հայերու ըստուար բաժին մը, օժտուած նիւթական, բարոյական ու մտաւորական ամէն տեսակ առաւելութիւններով, օտարացած էր։ և այն անհաշուելի բազմապիսի օգուանները զորս հայութեան հարստահարուած մեծամասնութիւնը պիտի կրնար քաղել իր այդ ազգակիցներէն, յաւէտ փճացած ու կորսուած էին։ Ճշգիւ չի

գիտցուիր թէ դարեր առաջ օտար երկիրներու մէջ բնակութիւն հաստատող ստուարութիւ հայերը եթէ կարողացած ըլլային անվթար պահել իրենց ազգայնութիւնը ու իրենց սիրտը շարունակ և մինչեւ այսօր բաբայիս ինչպէս պէտք է որ բաբայիս ամէն ճշմտիւ հայու սիրտ, հայրենիքի մէջ չարչարուող ու ըստպատու հայութիւնը ինչ օգուտներ պիտի քաղէր անոնցմէ։ նուազագոյն շահը գտնէ սա պիտի ըլլար որ հայ տարրը աւելի գերակշիռ ու աւելի պատկառելի գերբով մը պիտի ներկայանար աշխարհի, ու թերեւս առաջ եկած կորուսաններն ու վնասները աւելի շուտ գործնական էին։ Եթէ շահաստանի, Հունդուրիոյ և Ռուսմանիոյ տարբարուող հարցները այսօր մոգական ազգեցութեան մը ներքեւ յանկարծ դուրս ժայթքէին ինչ հայութիւն որ կուլ տուած են, ընթերցողին կը ճգեմ պարզուած տեսարանին ամբողջ վեհապատուութիւնն ու շքեղութիւնը այդի առջև բերել, գիտնա-

րով որ այդ հայութիւնը ամենէն հարազատ ու ամենէն կօրովի մասն է հայ ցեղին :

Բայց, փոխանակ այս տեսակ պատրանքներով օրօրուելու, լաւագոյն է անշուշտ գառն իրականութեան վրայ անգրագառնալ միշտ ու անոր բարելաւման միջոցները խորհիլ :

*
* *

Ճշմարտութիւն մըն է որ շատ անգամ մէկ մարդ մը կրնայ դարմանել բոլոր վնասը զոր ժամանակը, միջավայրը և կեանքի պայմանները կը հասցունեն ազգի մը ամբողջութեանը : Օրինակի համար Պ. Ղեւոնդեան մը յանկարծ առաքելական դեր մը կ'ստանձնէ ու իր օրհասական հայրենակիցներուն կը փչէ առհմականութեան խանդավառ շունչ մը, կ'ոգեւորէ կ'ողջնցունէ զանոնք՝ արհամարհելով իր տարիներուն բեւուր, կցահարելով իրեն դէմ կանգնուած արգելքները, ու երեւան բերելով ինչ որ ծածկուած կը պահուէր դարերու մոխիրին տակ :

Ղեւոնդեանի նախաձեռնութիւնը կրնայ ամենէն անակնկալ արգիւնքներուն յանգիլ իր հեւքտա ու հիււանդ կուրծքին տակ վառօղ հայրենասիրութեան կրակը կրնայ արագօրէն փոխանցուիլ ու բռնկցունել լայնածաւալ հրդեհ մը երիտասարդ սերունդին սրտին մէջ, և ահա մտղական հարուածով մը յա-

րութիւն առած կըլլայ ուսմանահայ գաղթականութիւնը, որուն անդարձ կորստեան վրայ հայ մամուլին մէջ այնքան արատաւալից դամբանականներ արտասանուեցան :

Հայուն աննմանակ ցաւերը յուզեցին բոլոր տիեզերքը. հայուն դոյութեանն իսկ անգէտ ազգեր այսպէս չափէն աւելի կը ճանչնան զանիկա, օտարը անհուն աղապատանք մը ունի հիմակ անոր համար : Առաջ եկած այս համայնարհային ցնցումին ու համակրութեան մէջ ոյշատերուած հայն ալ իր բաժինը ունի անշուշտ, անոր արեան մէջէն ձայն մը, հեռաւոր ու խուլ ձայն մը « հայրենիք ու ազգ » բառերը կը փոփսայ իր ականջին, ու կը սարսըռացնէ զինքը : Օտարացած կամ օտարանալու արամադիր հայուն հոգեկան այս վիճակը ամենէն յարմար առիթն է յետադարձ շարժում մը առաջ բերելու անոր վրայ : Ահա այդ շարժումը ստեղծելու կոչում ունեցողներէն մէկն է Ղեւոնդեան, որ ապաքէն պիտի ունենայ իրեն հետեւողները՝ վերակենդանութեան գործին ամբողջական յաջողութեանը համար :

*
* *

Պուրբէշի հայ գաղթականութեան մասին այս մխիթարական տեսութիւնները ըրած ատենս, աւելորդ չեմ սեպեր հոս դալճափար մը տարու այն դժնդակ ճգնաժամ

մին վրայ զոր անիկա անցուցած է ներկայ ողբալի վիճակին հասնելէ առաջ :

Երբոր յունական աններող վերիժառութիւնն ու նենդութիւնը քանդեցին Հայաստանի փառաւոր մայրաքաղաքը՝ Անին, գաղթող հալած հասանք մը անցաւ եւրոպական հողը հոն ապրելու համար կեանքը անդորրութեամբ : Այդ հասանքէն Ռումանիա եւ ունեցաւ իր բաժինը . սակայն յունական հայատեաց միլիտանդութիւնը հոս ալ հետապնդեց հայը : Այն ժամանակ Ռումանիան կը հեծէր օրթոսորքս տեսքօտներու լուծին տակ . սեւազգեստ հապօթնիկներ կղերականութեան սարսափը կը պարտցունէին ամէնուրեք , ու իրենց բովանդակ կատաղութիւնը կը թափէին հոյ գաղթականներուն վրայ , աւարդելով անոնց ազգն ու կրօնքը , հերետիկոս հռչակելով մեր առաքելական եկեղեցին , պիղծ ազրանոց յայտարարելով հայկական տաճարը : Օրթոսորքս եկեղեցիներու բեմէն , սեւհոգի յոյն կրօնաւորները թուք ու մուր կը ժայթքէին հալուն գէմ , կանիծէին կը քամահրէին զայն , ու անողորմ հալածանք կը քարոզէին անոր գէմ :

Պուքրէշի գաղթականները խընդրադիրներ կը մտաուցանեն երկրին տոմնիշորին (իշխանին)՝ հայկական եկեղեցի մը կառուցման համար . կատաղի տեսքօտները սուքերնուն

տակ կը կոխկուտեն այդ աղերսագիրները , ըոտելով որ հայերը՝ իբրեւ հերետիկոս՝ չեն կրնար եկեղեցի տնենալ : Սակայն , յետոյ , Հունգարիոյ Եղիսաբէթ թագուհին ազդեցիկ դեսպանը միջամտելով հայերուն ինպատա , իշխանը կը տարալուի հայկական եկեղեցի մը կառուցման արածնութիւն տալ : Ահա այն հրովարտակը որով հայերը իրենց սեփական աղօթատեղին հիմնելու ազատութիւնը ձեռք կը բերէին .

“ Թէպէտեւ ձեզ հայերդ քրիստոնեայ ազգ մը չենք ճանչնար , սակայն զիջանելով Հունգարիոյ Վեհ , Եղիսաբէթ թագուհւոյն միջամտութեանը , կը թոյլատրենք ձեզ եկեղեցի յը կառուցանել , պայմանաւ որ անիկա շինուի քաղաքէն դուրս , անբնակելի տեղի վրայ , որպէս զի ձեր հերետիկոս աղօթքներեքովը քաղաքը չպղծէք : ”

Մինչև այսօր պահուած է այս յտականչական հրովարտակը , ուսմէն իշխանին կնիքովը դրօշմուած , ու անիկա տպացոյցն է յոյն կղերին երբեմնի անարգ գերիշխանութեանը ուսմանական ժողովուրդին վրայ , որ հիմակ ամօթապարտ կը մնայ իր

այդ բոլորովին բարբարիկ ընթացքին առջև :

Աւելին կայ . այդ « անբնական տեղի մը վրայ » հայ եկեղեցիին կառուցումէն յետոյ , յոյն մետրոպօլիտը հրամայեց է անմիջապէս յունական եկեղեցի մը կանգնել հայ եկեղեցիին ամենող ճամբուն վրայ , նախքան թող որ օրթոտոքս սուրբերուն անուանը , որպէս զի անոնց շնորհիւ « հայոց եկեղեցիէն տարածուած գէշ հոտերը վանտին և չար աղօթքները բարիի փոխուին » :

*
* *

Յեղ մը սրբան հզօրապէս պատուաստուած ըլլայ ինքնապահպանութեան անհրաժեշտ յատկութիւններով , անկարելի է որ կարենայ դարբերով ասկալ իր ազդայնութեան ուզուած լախտի այս անադարոյն հարուածներուն : Ռումանահայր զիմացեր է սրբան որ ներքեւ են իր ուժերը . եկեր է թուական մը ուր այլ եւս իր գիմարութեան թուաբերը հիմնաքանդ եղեր են շրս կողմէն իր վրայ խուժող հոսանքին ուժգնութենէն : Կրնոնք սակայն փառք տալ որ գեւ խլեակներ կը ծփան ջուրին երեսը , որոնք իրարու քով բերուելով , իրարու կապուելով պիտի կրնան ձեւացնել եթէ ոչ նաւը իր նախկին ամբողջութեամբը , գէթ լատտ մը որ պիտի սկսի հանդարտօրէն ծփալ՝ Ղեւոնդեաններու նեան եւանդուն ,

ճարտար նաւազիգներու առաջնորդութեամբ :

Հետեւապէս բոլորովին յուսակաուր չըլլանք ռումանահայուն ապագային վրայ :

Երուանց Սեմսթեյանիւան



ՄԱՏՈՒՌ ԹԷ ՈՐԲ

Ժամանակէ մը ի վեր Բարիզի հայ գաղթականութեան մէջ մատուռի մը հարցը կը ծեծուի , որուն արձագանդ կը հանդիսանայ հայ լրագրութիւնը : Հայերը կուզեն որ իրենց մասնաւոր աղօթատեղին ունենան աշխարհի ստանին մէջ : Այս փափաքին արտայայտութեան մէջ աւելի ազգային արժանապատուութեան զգացման մը խնդիրը փնտռելու է քան բարեպաշտիկ արամազրութիւններու պահանջ մը . ասիկա ըսել չէ թէ Բարիզի հայերը ամբարիշտ մարդիկներ են . քաւ լիցի . բայց մարդուս կրօնական ձգտումները իրենց գոհացումը կրնան գտնել անապատին մէջ իսկ , կը բաւէ որ նիւթին կոշտ արտաքինը անհրաժեշտ չըլլայ երկիւղած մեծարանք մատուցանելու համար Աստուծոյ ու մեղքերուդ քաւութիւնը գտնալու համար :

Հիմակ , այս փափաքը մօտ է իրականութիւն գտնելու , վասն զի մեծահարուստ ռուսահայ մը . Պ . Ազեքսանդր Մանդաչեանց , խոստացեր է

հողալ բարիգեան հայ մատուռի մը չի-
նու թեան ծախքին մեծ մասը, որով շատ
հաւանական է որ առկէց քանի մը տա-
րի ետքը Բարիգի հայերը իրենց սե-
փական աղօթատեղիին մէջ Աստուած
փառաբանելու բախտն ունենան:

Սակայն, մատուռ բառը իր հա-
մետ կազմութեամբը երբեք չի հաչ-
տու իր մեծութեանը հետ այն գումա-
րին, որ պիտի յատկացուի եղեր ա-
նոր կառուցմանը. մէկ միլիոն ճրանք:
Ուրեմն, Բարիգի հայերը ոչ միայն
սեփական աղօթատեղի մը կուզեն,
այլ եւ կուզեն որ իրենց աղօթատե-
ղին համետ մատուռ մը ըլլալէ աւե-
լ՝ ճարտարապետական գեղեցիկ յի-
շակերտ մը ըլլայ, ազգի մը կրօնա-
կան ըմբռնումներուն վրայ բարձր
գաղափար մը ներշնչող:

Եթէ Բարիգի հայերուն ուզածը
մատուռ մըն է, ինչո՞ւ մէկ միլիոն
Ֆրանք յատկացնել անոր չինութեա-
նը. այդ գումարով, նոյն իսկ Բա-
րիգի մէջ կարելի է բաւական շը-
քեղ եկեղեցի մը կանգնել: Բարիգի
հայերը միշտ մատուռի վրայ կը խօ-
սին, ու մատուռ մը կրնայ կառուց-
ուիլ երկու հարիւր հազար ֆրանքով,
Բարիգի երկրորդական մէկ կէտին
վրայ, ու անիկա դարձեալ բա-
ւական պատուաբեր շէնք մը կրնայ
ըլլալ:

Մեզի պէս աղքատ ու հարստահար-
ուած ազգ մը, որ իր ճիտէն կախուած
ուսի հազարաւոր սովահար ու մարկ
որբեր, ի՞նչպէս պիտի յանդգնի մէկ
միլիոնի գումար մը ուրին ջուրին
թափել մայրաքաղաքի մը սալարկին
վրայ, կրօնական լիւքսի մը համար
միայն: Ո՞ր պէտքերնուս դեղ դար-
ման չըլլար այդ պատկանելի գումա-
րը, որուն կէսովը միայն քսան որ-

բանոց կրնայ բացուիլ Եւրոպայի մէջ
կամ Հայաստան: Անօգո՞ւտ բան է,
օրինակի համար, Եւրոպայի ազատ
մէկ հողին վրայ, Չուիցերիոյ մէջ,
հիմնել որբերու յատկացուած երկրոր-
դական վարժարան մը, որ նախադու-
ռը ըլլայ եւրոպական բարձրագոյն
ուսումնարաններուն: «Հայաստան սու-
վատանջ» ի աղիողորմ աղաղակնե-
րուն ականջ խփելով հարիւր հազա-
րաւոր Ֆրանքներ գրէթէ քմածին նը-
պատակներու խորելը ազգային ար-
ժանապատուութեան աւելի վնաս չի՞
բերեր քան Բարիգի մէջ հայկական
մատուռի մը բացակայութիւնը:

Ժամանակ մը կայսրանէինք մեր
ազգային այն հին բարերարները,
որոնց բանը գործը ժամ չինել էր՝
հողիններուն փրկութեանը համար,
բնաւ չմտածելով որ իրենց հողին
մեծագոյն հաւանականութեամբ աւելի
փրկուած կըլլար եթէ եկեղեցիի տեղ
դպրոց շինէին. եւ գուցէ ազգին վի-
ճակը հիմակ բոլորովին տարբեր հան-
գամանք մը առած կըլլար: Արդ, Բա-
րիգի լուսամբտ հայերը մեր հին բա-
րերարներուն գրութեանը պիտի հե-
տեւին՝ դպրոցի կամ որբանոցի տեղ
ժամ չինելով:

Պ. Մանթաշեանց առատաձեռն հայ
մըն է. Բարիգի հայերը եթէ ուզեն
կրնան աւելի անհրաժեշտ, աւելի
կենսական պէտքերու ծառայեցնել ա-
նոր բարի տրամադրութիւնները: Մէկ
միլիոն ֆրանքին մէկ մասովը կարող
են ունենալ իրենց մատուռը, համետ
ազգի մը համետ աղօթատեղին, ու
մնացած գումարը աւելի նպատակա-
յարմար գործածութեան մը յատկա-
ցընել:

Բարիգի գաղթականութիւնը, որ
մեծագոյն մասամբ լուրջ եւ ազնուա-

միտ հայերէ կը բողկանայ, պիտի ուզէ՞ արդեօք անդրադառնալ այս փափուկ խնդրին, որուն լուծումը այնպէս ինչպէս մենք կը մաղթենք՝ կրնայ անհամար բարիքներ արտադրել դժբախտ ազգերնու համար:



Ն Ա Խ Ա Պ Ա Շ Ա Ր Ո Ւ Մ Ն Ե Ր Ո Ւ Ն

Պ Ա Տ Ճ Ա Ռ Ը

Նախապաշարումներու ծննդեան թուականը պատկառելի հնուժիւն մը կը ներկայացնէ:

Ենթադրողներ կան թէ անոնց սկզբնաւորութիւնը առաջին մարդուն մեղքերէն ծագում առած է. շատեր ալ՝ և հոգեբան-ուսումնասիրողներ՝ փաստերով կը հաստատեն թէ նախապաշարումները աշխարհք եկած են ճիշտ այն օրը որ Ագամայ կողէն սկիոր մը կինը մարմնացուց:

Այդ անյիշատակ ժամանակէն ի վեր, հազարաւոր տարիներու շրջանին մէջ, մարդկային կեանքը շարունակ անցած է անհամար բուլբերէ, մտքերը գիտութեան շնորհիւ անհամեմատ կերպով զարգացած են, քաղաքակրթութիւնը հսկայա կան քայլեր առած է և սակայն նախապաշարումի և տեղորոշող առթեան ծագրելի սովորութիւն

ները դեռ մարդուն խմբին մէջէն դուրս չեն երած ու ընդհակառակը՝ շարաշար կերպով արուած են այն միտքերը որոնք կը ձգտին մտքաւիլ այդ ախտին դէմ:

Էն զարգացած տարրերուն, Եւրոպայի ժողովրդեան ամէնօրեայ կեանքը շաղախուած է այդ սին հաւատքովը: Թերթերու մէջ ստէպ կը հանդպինք լուսնոտներու այն պիտի պատմութիւններու՝ յաջողութեամբ, դժբախտութիւններ կամ արկածներ գուշակող որ մարդ զարմացմամբ կը հարցնէ ինքնին թէ արդեօք ասանքիններսրդ դարու վերջը չէ՞ որ կապրինք: Տրէյֆլուսի խնդրին ամենէն ատք միջոցին սունկերու նման վհակներ երեւան եկան Ֆրանսա որոնք սարսափ ձգեցին մտքերու մէջ և համարումներու վրայ իսկ ազդեցին:

Դեռ վերջերս աներեւոյթ եղած Ֆրանսացի սպայի մը մտօին տեղեկութիւններ հարցուեցան խաբէրիք կնոջ մը, և լուրջ կարծուած մարդոց կողմանէ, ու հրատարակութեան արուեցան:

Բարիղի Գթութեան - Պազարին արկածը ապացուցուց, լսին, մարդարէտութիւնները Օր. Գուէստի որուն ձայնը բարեբախտաբար դադարեցաւ այլևս հրատարակը ցնցելէ:

Մնձեր գոնտեցան որոնք հայ ազգին ցուերուն և ապագային վրայ դուշտիկ-կիններու կարծիքը խնդրեցին և նպատաւոր պատաս

խաններ ստանալով դեռ կրսպատեն որ անծանօթին մէջ գրուածները իրականանան . . . :

Եւրոպացւոց մէջ 13 թիւին չարագուշակ բնաւորութիւնը, ուրբաթօր ճամբորդութեան ելլելուն (Արեւելքի համար երեքշաբթի) և զմեքին իբրև նուէր տարուն մէջ վտանգներ նախատեսելը . Թուրքիոյ մէջ՝ ձեռքէ ածառ չառնելու և գիշերը մկրատ չգործածելու սովորութիւնները . կարգ մը ծիծաղելի միջոցներով հիւանդութեանց պարմանումները, հեռաւոր սեղեր , մութ անկիւններու մէջ պահուրտած՝ խողի թուղթերով , ուլունքներով , քարի կրտորներով կամ պակկայով մարգարէութիւն ընտելներուն պատգամները և կամ այն դժբախտութիւնները որ առաջ կուգան՝ փոխանակ բժշկական կանոնաւոր դարմանի մը հետեւելու՝ թուղթի կտորի մը վրայ գրուած անխմատ մէկ քանի բառերուն հաւատ ընծայուելէն եւայլն . այս ամէնքը պրզահաստնք չե՞ն հրաւիրեր և չե՞ն սպացուցաներ նախապաշարումին մեր էութեան մէջ խուրունկ արմատներ ձգած ըլլալը :

Ֆրանսացի բժիշկ մը , սօքթ. Տուքլաս , զարգացած մարդ մը ստույգասիրութեան առարկայ ընելով նախապաշարումները , գրքոյկ մը իսկ հրատարակած է : Եթէ կարելի ըլլար և կամ արժէր ամբողջութեամբը թարգմանելով հրատարակութեան տալ այդ գրքոյկին գա-

ղափարները , պիտի տեսնուէր որ դիտութեան աշակերտողներն անգամ զերծ չեն գտնուած նոյն իսկ նախապաշարումներու դէմ մաքառած ատեն՝ անոնց ազդեցութենէն Տուքլաս կըսէ թէ «նախապաշարումը բնագոյն է (!) instinctը որ նախազգացումի , երազի և գուշակութեան ձեւերով կը ներկայանայ և բնական երեւոյթներէն մին կը կազմէ . . . » մի՞թէ :

Մեզ համար դժուար պիտի ըլլայ հաւատալը թէ ճշմարտութիւն մը կայ այս գիտական բացատրութիւն կարծուած սողերուն մէջ . բայց դժուար չէ համոզուիլը թէ մարդուն միտքը եթէ ոչ սաղմնային վիճակի մէջ , բայց դեռ շատ ետ մնացած է երբ բժիշկներն ալ այսօրան տարօրինակ եզրակացութիւններու կը յանդին :

Ժամանակ մը նախապաշարումի պատճառներէն մին կրօնքը ենթադրուած էր . սակայն այն ուղեղները որոնք կրօնքի մը դաւանիլը մերժած են , անհաւատութիւն քարոզած և մինչեւ իսկ բնագանցական երեւոյթները մեր կարծածէն շատ աւելի տարբեր կերպով բացատրելու չափ սուղ գացած են , տեսնուած է որ քաջիւամանի մը , ժողովրդական աւանդութեան մը կամ բժժանքի մը կարեւորութիւն սուած և ազդուած են անոնցմէ :

Ըսել է կրօնքը կարելու դեր մը չէ կատարած այդ սիւսլ հաւատքին

կազմաւորութեանը մէջ . եթէ կը
բօնքը չէ, ո՞վ է ուրեմն յանցաւորը :

Ղիթրէ ըսած է թէ թերի դաս
տիրակութիւնն է պատճառը, Պո-
նաբարթ կռապաշտութիւնը յան-
ցաւոր կը բռնէ ու Ռընան՝ ազի-
աութիւնը և կոյր հետեւողութիւնը :

Երկար կըլլայ մի առ մի թուել
այն կարծիքները որոնք արտայայտ-
ուած են վերջացող դարուն մեծ
մարդոց կողմանէ ի մասին նախա-
պաշարումներու . ամէնքն ալ մըն-
ներով հեռուները դեգերած են
այն մեծ զօրութենէն որ սկզբաւ
պատճառը եղած է նախապաշա-
րումներուն և որ իբրև սկզբնաւ
պատճառ՝ փոքրիկ սոկոր մը եղած է,
կի՞նը . . . :

Հայերս իբրև հին կռապաշտներ
և յետոյ քրիստոնեայներ, մեր բա-
ժինը ունեցած ենք այս կեղծ հա-
ւատքին մէջ : Գրեթէ ամէն մայրեր
կը խրատեն իրենց զաւակներուն
որ ինկած կամ փոսած աղաներ-
նին երգիկի մը վրայ նետեն և
ինդրեն Ստուծմէ որ փոխարէնը
սակի կամ հաստատուն աղայ
տայ : Ռճիր մըն է ազուն հաւա-
ցըներ թէ օգին մէջ նետուած պարզ
խնդրանքով մը մեր բաղձանքները
կ'իրականանան : Սյդ հաւատքը
անգամ մը որ ազգէ մատող մըտ-
քին վրայ, կը սկսի ածիլ, ճիւղա-
ւորուիլ այնքան արագընթաց կեր-

պով որ աղան կը լեցուի սին յոյ-
տերով և անիրականալի բաղձանք-
ներով ու հեազհետէ տարիքին հետ
կը զօրանայ, արմատներ կը ձգէ և
ճնունդ կուտայ կարգ մը աւերու-
դապաշտութիւններու, որոնց առաջ-
քը առնելը դրեթէ անկարելի կըլլայ :

Նաև ընտանիքներու մէջ միշտ
կ'իններն են որ կը յանձնարարեն
չապիկ մը գիշերը մինչև առաւօտ
դուրսը ցողին ձգել և առաւօտուն
կանուխ պաղ պաղ հագնիլ որպէս պի-
տենցած մէկ հիւանդութիւնդ բժըշ-
կուի . և աղաքները ասիկա ընելով ի-
րենք իրենց կը հետեւցնեն թէ ա-
ներեւոյթ զօրութեան կարողութիւ-
նը անսահման է և ազդեցութիւնը
անվրէպ :

Օրհնուած ջուրի եօթը կաթիլ
խմելու, ճամբորդին ետեւէն դոյլ
մը ջուր թափելու և ուրիշ այս կար-
գի արարողութիւններու հեղինա-
կութիւնը կ'իններուն փառքը կը կաղ-
մէ միշտ և կապացուցանէ թէ ի՞նչ
կերպ կը մտածեն անոնք և որքան
ճգնած են որ նախապաշարումները
հաստատա կուտանի մը վրայ դրուին
և յարատեւ պահուին յօղուտ ի-
րենց սնամաութեան :

Յաւալին այն է որ շատ հին ժա-
մանակներէ ի վեր ազդած են ա-
նոնք այր մարդուն վրայ ալ և յա-
ջողած են բազմութիւ հաւատացեալ-
ներ ունենալու :

Կ'ինը բնութեան մէջ իր բռնած

դիրքովը կըմբռնուի որ մեծապէս ազգէ մարդուն վրայ և զերէ զոյն. բայց ինչո՞ւ այդ կինը փոխանակ կողի ոսկրէ մը ստեղծուելու գանկի ոսկրէ մը չըստեղծուէր :

ԱԶԱԻՍ



ՎԵՐԱԾՆՈՒՄԸ

ՌՈՒՄ ԱՆՍՀԱՅՈՑ ՄԷՂ

Տասն և հինգ տարիէ աւելի է որ Պուքրէշի հայերը բոլորովին խորքունի մէջ ընկղմած էին. Հայաստան և Արարատ ընկերութիւնները թաղելէ, աղջկանց վարժարանին զըռները փակելէ, և աղայոց վարժարանը հիմակուան կսկծալի վիճակին հասցնելէ ետքը, կարծես կը սպասէին որ մնացեալն ալ ժամանակը կործանէր, հետքն անգամ չլթողլով Երբեմնի այն բարգաւաճ և կարեւոր հայ գաղթականութեան: Թաղականութեան գլուխը՝ ազգային ամէն գզացումէ զուրկ երկու անձեր, եկեղեցիին մէջ երկու անտարբեր եկեղեցականներ և զպրոցին զեկը ուսմանացի տնօրէնի մը ձեռքը, ընդհանուրի անտարբերութեան մէջ, անդարձօրէն կորսուելէ տարբեր ճակատագրի չէին կրնար առաջնորդուիլ զպրոցն ու եկեղեցին:

Ասկէց զատ, երէկի յաւիտենական թաղականները իրենց տասնըհինգ սարուան պաշտօնավարութեան

հաշիւը չէին տուած ո՛չ ազգին, ո՛չ քաղաքապետութեան. հաշիւները եկեղեցիի մը որ Ռուսմանիոյ ամենէն հարուստ եկեղեցիներէն մէկն է և տարեկան մօտ 30,000 Ֆրանքի Եկամուտ ունի, այնպէս որ նիւթական կործանումն ալ մօտ էր միանալու բարոյական կորստեան:

Սակայն, անցեալ տարի, յունիսին, կացութիւնը սկսաւ տակաւ փոխուիլ դէպ իրարին. և այնքան յուսադրական հանգամանք մը ստացաւ որ համարձակեցայ յօղուածիս գլուխը վերածնում բառը դնել, աւելցնելով միանգամայն ռումսոնաեացց, սա համոզմունքով որ Պուքրէշի մէջ կատարուած ամէն ազգօրուտ գործ, յայտնուած ամէն փրկաւէտ գաղափար, կայծի պէս պիտի տարածուի Ռուսմանիոյ ուրիշ հայաբնակ քաղաքներուն մէջ, որոնք անշուշտ պիտի կրեն կեդրոնին բարեշքման հակահարուածը:

Պ. Մանուկ Ղեւոնդեան — լաւ միաք պահեցէք այս անունը, վասն զի անիկա մեծ ազգասէր մըն է — ստանձնեց Պուքրէշի մէջ աղգայնութեան պահպանման գրօշակակրի նուիրական դերը: Պ. Ղեւոնդեան պետական նախկին կարեւոր պաշտօնեայ մըն է, հանգըստեան թոշակի կոչուած: Եւ հրաշալի է տեսնել թէ ինչպէս այս ձեռունին, հիւանդ, անկարող, հեւալով և աքալով, ամբողջ տարի մը առիւծի պէս մաքառելէ ետքը, գրեթէ մօտ է իր նպատակակէտին հասնելու, վանելով արգի թաղականները, վերաբանալով աղջկանց վարժարանը, մանկապարտէզ մը հաստատելով, և այլն:

Ո՛չ սպառնալիք, ո՛չ մեքենայութիւններ չկրցան զինքը արգիլել գործելէ, քանի մը բանիբուն կրիտասարգներու աջակցութիւնով. իր կու-

սակիցները օրէ օր աւելցան. թաղեցիները ժողովներու հրաւիրեց եւ համոզիչ կերպով բացատրեց անոնց ծանր կացութիւնը: Աւետարեան իր դեղերը ու սրուակները մէկտեղ առած կուգայ ժողովի, որովհետեւ յաճախ շնչարգելութիւնը իր ատենաբանութիւնները կընդմիջէ. սակայն չի վհատիր. եւ ատոր համար, կ'ըսեմ, հրաշալի է: Վերջին ժողովին մէջ կըսէր. « ծեր ու հիւանդ եմ, բայց կոխու առջ կը տանիմ. անցեալ տարի աւելի հիւանդ էի, հիմա լաւ կը զգամ ինքզինքս. Ստաւած ուժ տուաւ ինձ, որովհետեւ եկեղեցիիս ու ազգիս համար կը մարտնչիմ »:

Այս պահուս, Պուքրէշի ամբողջ հայ երիտասարդութիւնը Աւետարեանի հետ է. անտարբերութիւնը մէկդի թողած՝ իրենց ազգն ու եկեղեցին կը մտածեն եւ պարտք կը սեպեն ազգային վերածնունդի սահմանները հանդիսանալ: Հակառակ կուսակցութիւնը եւս մեծկակ է՝ թաղականներու ազգականներէն եւ մօտիկ բարեկամներէն կազմուած ըլլալով. պայքարը բաւական ուժով է: Այժմ Պուքրէշի հայոց մէջ կռիւ եւ հետեւաբար կեանք կայ:

Աւելին կայ. Պուքրէշի հայ երիտասարդութիւնը ընկերութիւն մը եւս հիմնեց անցեալ ամսուան սկիզբը, նպատակ ունենալով առ այժմ փոխադարձ օգնութիւնը, եւ իբր հեռաւոր նպատակ բարեգործութիւնը եւ յոռաջդիմութիւնը. — Ճշմարիտ միութարութիւն մըն է տեսնել թէ ինչպէս այժմ՝ երբեմնի անտարբեր եւ միայն անձնական զուարճութեանց անձնատուր երիտասարդները խմբուած, իրենք իրենց մէջ տնտեսուած, եղբայրական զովելի համերաշխութիւնով

մը գաղթականութեան բարիքը կը մտածեն ազգայնական անակնկալ զարթումով մը: Ընկերութեան անունը Արաքս գրուեցաւ, երբ այս տողերը գրողը բացատրեց իրենց թէ այս անունը կրողը զեռմըն է վազող Մայր-Հայրենիքի մէջ, գետ մը բանաստեղծներէ երգուած, մերթ վճիտ ցնձացող, մերթ պղտոր ու արտասուալից, մասնակից իր ոտոգած երկրին զգացումներուն, եւ այժմ կարմիր՝ հայու արիւնով . . .

Չէ՛, Ռումանիոյ հայ գաղթականութիւնը չի կործանիր, չի փճանար եթէ զօրաւոր ձեռքեր առին քաշեն զինքը անշուշտին բերանէն, ուր աւրագալազ կը դիմէր: Նախնեաց արիւնը չէ ցամքած իրենց երակներէն. կայծի մը պէտք ունի բռնկելու համար. եւ այս կայծը հայրենագիտութիւնն է, որուն հիմնապէս անտեղեակ են. եւ ով որ ուսուցանէ անոնց թէ ինչ ենք մենք, Ռումանիոյ գաղթականութիւնը փրկուած կըլլայ:

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԿՈՒՄ

Պարէն

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

(Ա Բ Պ)

Ա.

Դեկտեմբերի սառն եւ ուժգնաբախ քամին արդէն իսկ զող տալ սկսած էր հազարաւոր հայ գաղթականներուն, որոնք Վառնա նետուած էին այն անխորհուրդ ու խառնիխուռն գահավիժ-

մամբ որով ոչխարներու հօտ մը կը խուժէ իր մակաղաանդին:

Իրիկուան ժամը վեցն էր, ու արդէն գաղթականներուն մեծաժխոր խժտուքը դադարած էր քաղաքին ամէն կողմը: Հայերը ծակամուտ եղած էին, ցրտահար ու արհաւիրքով լեցուն:

Սակայն քաղաքին արեւմտեան թաղին ուղղաձիգ փողոցներուն մէջ, նուազկոտ կաղի կտուցներու մութ շիկագոյն լոյսին տակ սիլուէզներ կը գծուէին ու կանհետանային դեռ: Կապելայէ վերագարձող, կամ թէ, պատկերու տեղ մը չունենալով հիւանդանոց գացող գաղթականներ են: Կան ալ որ, գիշերուան մինչև այգ ժամը գործով գրադելէ յետոյ՝ կերթան կը կծկուին մութ ու խոնաւ գիտեաման մը անկիւնը մէկ երկու շիջ հետէ կամ քանի մը գաւաթ գինի կլլելու համար:

Այս վերջիններէն էր Գառնիկ, որ երկու ձեռքերը մսկոտորէն տափառին գրպաններուն մէջ պատսպարած, ուսերը վեր, գլխարկը մինչև ընթուխները քաշուած հովէն չտարուելու համար, գրեթէ քսուելով կանցնէր ցածրիկ խրճիթներու առջեւէն: Անիկա գրեթէ խնդի մը պէս բացաւ դուռը կապելայի մը, որուն առաջոյքի պատուհանները այնքան աղտոտ էին որ ներսը վառող լոյսը հազիւ կը նըշմարուէր գրէն: Գաղթականը դողդոջուն բարեւ մը նետելէ յետոյ գործասեղանին ետեւը կ'սցող մարդու մը որ գինեպանն էր, վառարանին մօտ դրուած սեղանի առջև նստաւ: Հագուածները այնքան եղանակին անյարմար էին որ ծունկերը, ցրտահար, իրարու կը զարնէին: Երկու ձեռքերովը աչքերն ու ականջները կը չըփէր, որոնք սառած ընդարմացած էին

անուրի ցուրաէն: Ապշութեան առաջին վայրկեանը անցնելէն ետքը, մարդուն առաջին խօսքը յիշոց մը եղաւ.

— Վա՛յ շունչանորդի, աստեղ Ստամպուլին չըլմանիր կոր էղեր . . . ե՛ա . . .

Յետոյ, փիլիսոփայական խորհրդածութիւն մը ըրաւ.

— Ատա՛մ, ըլլալիքը կըլլայ. սասկիմ՝ նէ սասկիմ . . . Աստար մարդ հոգի չունի՞. տահա ինէ խեղճերը կան . . . հէ՛մ, ըսաւ խորհրդաւոր ձեւով գլուխը օրրելով, ամէն մարդ ինծի պէս շունչանորդի, հանած վարած չըլլար . . .

Իր նկարագրին այս անկեղծ գիտակցութենէն հպարտ, Գառնիկի աչքերը չողացին:

— Պա՛ռպա, շիջ մը սեւ գինի բեր նայիմ, պոռաց ուժեղ ձայնով մը, յունարէն լեզուով:

Անկիւնէն մութ, խորունկ ձայն մը եկաւ.

— Կո՛ւ-գա՛յ-կո՛ր:

Քանի մը վայրկեան ետքը, Պառպան շիջ մը լեցուն գինի կը բերէր կը գնէր սեղանին առջև:

Մարդ շատ քիչ անգամ առիթ կունենայ հանդիպելու Պառպանին պէս թիբի մը. ասոր համար շահեկան կը սեպենք զայն երկու տողով նկարագրել հոս, մանաւանդ որ այս պատմութեան ընթացքին մէջ քանիցս առիթ պիտի ունենանք ընթերցողը մտցնելու Պառպանի գիտեառնը:

Անիկա վաթսուն տարեկան մը ըլլալու էր. բայց իր այս ձերութիւնը կը նմանէր դարաւոր կաղնիի մը կոճղացած ձերութեանը, որ կարծես ակելի պնդակազմ, աւելի առողջ կը ցուցնէ զինքը: Քալուածքը ծանրա-

զանգաղ էր, վիզը թանձրօրէն ընդե-
լուզուած երկու գմբեթարդ ուսերուն
մէջտեղ, դէպ առաջ հակուածով մը, որ
երբեք չի շտկուիր՝ տարիներու բիրտ
լախտին տակ վերջնականապէս ճըկ-
ուած: Գլխին այս թեքումը կերպով
մը շեշտած էր կոնակին կառկառը,
որ ուսերէն կ'սկսէր ու մէջքին վրայ
կաւարաէր: Սակայն Պառպարին շա-
հեկանութիւնը իր դէմքին վրայ կը
խտանար. իր նկարագիրը անկէց կը
ճառագայթէր: Երբեմն պարտէզներու
դուռը կամ ճաշարաններու սեղաննե-
րուն քով կը տեսնես կախերես գամ-
փըռեր, անխռով լրջութեամբ մը կըր-
թընած առջևի թաթերնուն վրայ,
մերթ քնանալով, մերթ քնատ ու
տրամախառն յոգնածութեամբ մը հաս
հոն յառելով իրենց խաժ աչուը-
ները, որոնցմէ հասող խորին հեզու-
թիւնը չի մնողմացներ սակայն վայ-
րագութիւնը որ պահուըտած է անոնց
ժանիքը ծածկող թուլմաշկ շրթնե-
րուն, հաստաբետ կզակին ու ակա-
նողիքին թանձր կնճիռներուն տակ:

Արտայայտութիւնը, զոր գամփիին
դէմքը կ'ստանայ իր այդ կեցուածքին
մէջ, տարօրինակ կերպով կը նմանէր
Պառպարին դիմադժութեանը: Սառուար
ծնօտին մներուն թոյլ կախուածու-
թիւնը, կոպերուն աղեղնածեւ ուռեց-
ւորումը ու աչքերուն ցանցկէնը ար-
եան դծերով շերտաւոր, միանալով
մտայլ ու խեռ նայուածքի մը, երե-
ւան կը հանէին անմերձենալի, կոշ-
տուկուպիս նկարագիր մը:

Պառպարին մարդու հետ շատ չէր
խօսեր. իր ամենէն երկար խօսքը ե-
րեք բառէ միայն կը բաղկանար.
մարդատեաց մըն էր, յոսետես մը,
աշխարհքէն զըռուած սեւամաղձոտ մը
թերնու: Իր կեանքը խաւարչուտ ու

մտայլամած կապելաին մէջ կանցու-
նէր, ուր երկար տարիներէ ի վեր
իրերը իրենց անսխալ վիճակին մէջ
կը մնային: Իր միակ հոգն էր հարա-
գատ գինի պատրաստել, այս բանին
մէջ տեսակ մը մոլեռանդ աւելորդա-
պաշտութիւն դնելով: Ու իրօք պատ-
ուական էր իր գինին, զոր հիմա
Գառնիկ կուշտ կուշտ կըմբռնէր
և որ իր երակներուն մէջ կը ճառա-
գայթէր անուշ ջերմութեամբ մը:

— Օ՛խ, կը մըմտար սիկառի մու-
խին վէտիվէտ գուլաներուն յառե-
լով աչքերը մտկօրէն, հիմակ կընամ
ընելիքս չընելիքս մտածել...

Ջեզուէն կախուած աղօտ լամ-
պար մը իր լոյսը տաժանօրէն կը
սփռէր այդ խղճուկ պարապին մէջ՝
առարկաներուն գիծերը տարողներով,
հազիւ ծրագրելով Պառպարին գամփի-
վայրագ գլուխը, գործասեղանին վը-
րայ շարուած շիշերու և գաւաթնե-
րու անտառին ետեւէն: Յաճախօրը,
գրեթէ մութին մէջ ընկղմած հեռուն
անկիւն մը, պիտեբը խածխածելով
տեսնողտ մտախառնութեամբ, մասները
շարունակ գինիի գաւաթին շուրջը
պրկուած, կը ծխէր, կը ծխէր, ան-
գիտակից մոլեղնութիւնով մը, մու-
խի յորձանքներ տեղալով քիթէն բեր-
նէն:

Հազարաւոր գաղթականներէն մէկն
էր ինքն ալ, խեղճ, բախտախնդիր,
ապրելու համար ամէն բան աչք ա-
ռած, Պոլիսը ձգած՝ չէ թէ կոտորածէ
կամ բանտարկութենէ վախուն, պար-
զապէս որովհետեւ ամէն մարդ ձգել
փախչելու վրայ էր, ու այդ աղմկա-
լից խառնակութեան մէջ ինք, յան-
դունդն, ճարպիկ ու անխղճահար, ան-
շուշտ պիտի կրնար բախտ մը ձեռք
ձգել: Իր նպատակին հասնելու հա-

մար, Գառնիկ ունէր բոլոր պահանջուած յատկութիւնները:

Այն հազուադիւտ տիպարներէն էր որոնք նկարագրի, մարմնի, շարժուածեւորու ձկնութիւն մը ունին որով կրնան ամէն մտրթ հագնիլ՝ դէպքերէն ու պարագաներէն օգտուելու համար, ստել, խարել, գողնալ, կեղծել եւ նոյն իսկ, ծայրայեղ հարկաւորութեան մը առջեւ, դաշոյն գործածել:

Պոլիս, Գաղափլայի յունական բարքերը ուսումնասիրած եւ մեծ յաջողութեամբ իւրացուցած էր զանոնք: Յետոյ Գում-գաբու, Սամաթիա եւ ուրիշ հայ կեդրոններ պտտած էր ներդաւոր սոցոսկուսով, խարերայ ու ճամբարակ կեանքի մը ցեխին մէջ թաթխուած, ուսկից ա՛լ չէր յաջողած դուրս ելլալ: Հուսասար ճարտարութեամբ կրնար ձկնորսի ու ջրհանկիւրի դեր խաղալ, անոնց բոլոր գրուելիկ, տմարդի, արհամարհոտ ձեւերովն ու խօսուածքովը: Բիչ շատ կարգալ ու գրել գիտնալով, ի հարկին կրնար ինքզինքը բանգէտ մը ձեւացնել, բունն հայրենասէրի մը պէս ներբողել յեղափոխութիւնը, ազգին փրկութիւնը անկից կախուած հոչակելով ու ինքզինքը ներկայացրնելով իբրև անոր ռահվիրաներէն մէկը:

Բայց, իբրեւ վարպետ յարմարող մը այն միջավայրին ու այն մարդոց որոնց մէջ կը գտնուէր, երբեմն ալ կատաղի հակայեղափոխական մը կը ներկայանար երբոր իր շուրջինները — որոնց գաղափարներն ու զգացմունքը վարպետութեն կը շօշափէր առաջուց — յեղափոխութեան քֆրող շարժիներ ըլլային. հոն, Գառնիկ, ա՛լ առաջուան տաքսիրտ յեղափոխականը չէ. կը պոռայ, կը հայհոյէ, կանիծէ,

նոյն իսկ այնքան վայրագ ու անխիղճ կոպտութեամբ մը կը յարձակի որ իր ունկնդիրները, որքան ալ կոյր քամահրողներ յեղափոխութեան, դրժգոհութեան ծամածուսմներ կընեն երբ լսեն անձնուէր հերոսներու նուիրական յիշատակը նշաւակուած, ցեխոտուած:

Այն ատեն կը փութար իր կատաղի թափին ազդեցութիւնը մեղմացնել.

— Էֆէնտիմ, էս ատ գաղափլընէրուն իշտարքի պան կըսեմ կոր նէ, ասըլ խապաթը ասոնք կրակին մէջ նետողներունն է:

Պոլիս, կարգ մը տեղերու մէջ, « ավուգաթ Գառնիկ » կը յորջորջուէր՝ իր բնական ճարտարախօսութեանը համար: Այս յորջորջումը լոյս մը ծագեցուց օր մը իր ըղբղին մէջ. քանի որ « ավուգաթ » կը կոչուէր, պարտաւոր էր գործնականապէս արդարացրնել այդ տիպոսը. ուստի, իբրեւ փաստաբան, օր մը ստանձնեց խեղձին մէկուն դատը, դրամ կորղեց անոր ձեռքէն, ու յետոյ դատն ալ կորսուեցաւ: Այս առաջին ցաւաւթնէն քաջալերուած, Գառնիկ իրաւաբանութեան տարրական պայմաններուն ծանօթացաւ, ու դատական ձեւակերպութիւնները սորվելով, ա՛լ սկսաւ փաստաբանութիւն ընել, անոր ասոր դրամը խարերայութեամբ շորթելու համար: Իր այս նոր արհեստին, ու զայն գործադրելու մասնաւոր եղանակին հետեւանօք, մարդը ստիպուած էր տեղէ անդ փոխադրուել շարունակ, ու անդաստան դառնալ Պոլսոյ թաղերուն շուրջը, մէկ կեցած տեղը մէյ մըն ալ բնաւ չերեւնալով կամ շատ ուշ, իր գործած շահատակութեանց աստիճանին համեմատ:

Երբոր Գառնիկ շոգենաւ մտած էր

Պուլկարիա գալու համար, ճոխ ծրագիրներու երամով մը խոնուած էր իր միտքը. շահագործութեան կոյս հող մըն էր Պուլկարիան, ուր ինք գրեթէ անծանօթ մըն էր, կամ թէ այդ իջարանցումին մէջ զինքը ճանչցողներն իսկ անտարբեր աչքով միայն պիտի դիտէին իր ներկայութիւնը գաղթականութեան մէջ:

Սակայն, երկու ամիսը անցած էր որ Վառնա կը դառնուէր, ու զեռ իր ծրագիրներէն ոչ մէկը մարմին առած էր. ունեցած պզտիկ յաջողութիւնները նշանակութիւն չունէին իրեն համար. անօթի չմտալու չափ բան մը: Առաջին ամիսը հանպիպած էր տարէց մարդու մը որ իրեն յանձնած էր նոր գնած մէկ սայլը, զայն բանեցնելու եւ շահը իրեն բերելու համար: Փառնիկ, սայլապան, չարաչար շահագործած էր սայլին տէրը. գրեթէ բնաւ դրամ չէր յանձնած տիրոջը, օրը ասոր ֆըրանք վատկած ատենն իսկ: Յետոյ, սայլը առնուած էր ձեռքէն:

Օր. Ֆրէյզըրի ժամանումը նոր լոյսեր ծագեցուցած էր Փառնիկի բեղմնաւոր ուղեղին մէջ. հին ծրագիրները լքուած էին: Ու անմիջապէս գործի սկսած էր:

Իր աչս նոր ծրագրին յաջողութեան պայմաններուն վրայ է որ կը խորհէր հիմա Պառպան գինետան մէջ, որուն առայութիւնը եւ լուսութիւնը խորունկ կերպով կը ներդրած էին իր հոգեկան ալիծուսի վիճակին վրայ:

Կ'ըմպէր ու կը ծխէր, մերթ րնդ մերթ խուլ բացագանչութիւն մը միայն արձակելով, որուն արձագանքը գործասեղանին ետեւէն կուզար, Պառպան խոպոտ կոկորդէն.

— Շիշ մը գինի՛, Պառպա:

— Կո՛ւ-գա՛յ-կո՛ր...

Ու մատները, ջղածիք ու դողդոջուն, շիշին կը փակչէին՝ հատցնելով անոր պարունակութիւնը յարալէզի մը արիւնքամ մոլեգնութեամբը:

Ու մարդը, երբոր իր մտածումներուն յաջող գարծուածքէն գոհ կը մընար, սիտիանքի հառաչանք մը կ'արձակէր՝ գլխարկը գանկին վրայ անդուորելով երկու ձեռքերովը:

— Օ՛խ, հա շէօյլէ պէ՛...

Ժամեր անցան այսպէս: Շիշերու գէղին ետեւը՝ Պառպան գլուխը սկըսած էր օրօրուիլ, աչքերը փակ: Լամպարին լոյսը կը զեղէննար: Ու Փառնիկ կը խմէր ու կը ծխէր տեսակ մը անգլիտակից հեշաախտութեամբ, անուշ հեռապակերներու ծփանքին մէջ գրեթէ մոռցած իր վիճակին կըսկըծալի գառնութիւնը, այդ հաճոյսլի ինքնամոռացումը անհունապէս երկարելու կամէութեամբ մը:

Մէկէն ի մէկ ցնցուեցաւ, քունէ արթննալու պէս: Վերջին գաւաթը շուրթերուն սաբաւ ու ծծեց յետին կաթիլը:

— Բերուզը ինձի կսպասէ, մըրմըռաց:

Ու ոտքի ելաւ, արծաթ դրամ մը դրաւ սեղանին վրայ ու «գիշեր բարի» մը նետելէն յետոյ Պառպան որ աչքերը կը թարթափէր, գուրս ելաւ կտակելոյցէն ու մտաւ փողոցներու մութ լարիւրինգոսին մէջ, ուր հովը կը թաւալէր քսամներ շառաչմամբ:

Յետանդ Մեմսէֆիանիսան

(Շարունակէ)



Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Կ

Դեռ ամիս մը առաջ Չարսկօէ Սէլօի մէջ Չարին գէմ գաւա. գրութեան հետքը գտնուած էր. հիմա ալ նոր գաւադրութեան մը մասին Ղօնածոնէն կը հեռագրեն Ն. Թ. Բրէսէի հետեւեալը .

Օտէսայէն Թայնզի և Տէյլի Թէ. շէկրաճի կը գրեն Չարին գէմ սարքսած գուտգրութեան մը մանրամասնութիւնները որու հետ. քը բըրրովին գրպուծով գըա. նուած է :

Լօզովա-Սեվաստաբօլիան երկա. թուղիին գծին վրայ , որով Չարը Սպալտի ճամբորդութենէն Լիվա. ախա պիտի անցնէր , շատ մը թու. նէշներ կան , որոնց վերջինը մօտ 1600 մէթր է : Սեվաստաբօլի կողմը կը գտնուի ձուլածոյ շրի խողովակ մը՝ թունէլը խոնաւութենէն ազատ պահելու համար : Արքայական զոյ. գի հասնելէն 14 օր առաջ , երբ ա. նոնց ճամբան հսկող զինուորները դեռ զետեղուած չէին , կը նշմար. ուի երիտասարդ մը , որ գրեթէ ամէն օր թունէլի և շուրի խողու. վակին քովը գետներ կը փորէ եղեր. կը հասկցուի թէ աղան Մօսքովի համարարանի ուսանողներէն և սեւ. ծովեան պատերազմական նաւու մը

հրամանատարի որդին է : Նախ սեանողները կը կարծեն թէ երի. տասարդը ձուկ որսալու սրգ կը փնտռէ և ուշագրութիւն չեն գարձ. ներ , սակայն ուսանողին այդ ըն. թացքին վրայ եղած աարածայ. նութիւնները ստտիկանապետին կասկածը կ'արթնցնեն որ քանի մը ստտիկաններով կերթայ ու. սանողին փորած աեղը . ստտի. կանները երեւնալուն պէս՝ ու. սանողը ձեռքէն թին կը նետէ ու կը փախչի , ստտիկան մը կը հետա. պընգէ և կը ձերբակալէ ուսանողը : կը խուզարկեն շրի խողովակը և կը սեանեն որ մէջը փորուած է և պայթուցիք նիւթերով լեցուած թու. նէլին երկայնութեամբը : Հետեւեալ օրը այդ նիւթերու պայթման փորձը կրնեն Սեվաստաբօլի քովերը գա. տական և ստտիկանական պաշտօն. եաներու ներկայութեան , և պայ. թումը սարսափելի կըլլայ :

Մասնագէտները կը հաստատեն որ եթէ այդ գաւադրութիւնը յա. ջողէր , ոչ միայն կայսերական շո. գեկաւքը այլ և ամբողջ թունէլը պիտի խորտակուէր :

Այս պատճառու խուզարկու. թիւններ եղած են հարաւային Ռու. սիա և Մոսկուա ու բազմաթիւ մար. դիկ բանտարկուած են :

Հումպէրթօ թագաւորը սպաննու. զին գառավարութեան ատենները հաստատուեցաւ թէ միջազգային

անիշխանականները վճռած էին գերմանական կայսրը և Ռուսիոյ Չարը սպանել, բայց չէին կրցած գտնալ վճռին գործադրման թուականը:

Խորմեան կաթողիկոսը Տփսիսէ վերադարձին գարձեալ ձեռնադրութեան խնդիրներով պիտի ըզբաղի և հաւանական է որ յառաջիկայ գարնան մէկ քանի եպիսկոպոսներ ևս աւելնան ազգին գլխուն:

Այս անգամ կարգը երուսաղէմի միաբաններուն է, որոնց մէջ պիտի գտնուի, կրսն, հաւ Աղէքսանդրիոյ մէջ պաշտօնավարող վահրամ վարդապետ Ազարեսներ:


Խորմեան Սրբազան առանց բարակը փնտռելու եպիսկոպոսական աստիճան բաշխելով՝ ազգին ծառայութիւն մը մատուցած ըլլալու գոհունակութիւնը կունենայ արդեօք: Ճշմարտութիւնը սա է որ ազգին աղիտաբեր պիտի ըլլան օր մը այդ եպիսկոպոսներուն մէկ մեծ մասը և գաւառները պիտի շարունակեն հովիւի չգոյութենէ տառապիլ որքան որ վոստրի ափերուն վրայ եկեղեցիները պատրաստ ըլլան պորարտացնելու մեծփոր ու թուլամորթ եպիսկոպոսները:

Վեհ. կաթողիկոսին հոգածութեանը կը յանձնարարենք հաւել վահան վարդապետ Տէր-Մինաս:

եանն ու Տաճատ վարդապետ Ռուկանեանը: Անոնք ալ մեզք չե՞ն:

Իզմիրեանց զրական մրցանակաբաշխութիւնը յետաձգուեր է. որովհետեւ յանձնաժողովը վերջին պահուն նկատեր է թէ կատկին մէջ տրամադրութիւն մը կայ թէ երկու տարին անգամ մը սեղի ունենայ այդ մրցանակաբաշխութիւնը, և թէ մինչեւ 10-15 տարիէ ի վեր ամէն տարի սեղի ունենալով աններելի շեղում և խաչոյ սխալ մը գործած է, ուստի որոշեր է ասկէ վերջն ալ երկու տարին անգամ մը կատարել:

— Կըսուի թէ Օրմանեան պատրիարքը վերջնականապէս հրաժարեր է:



Բ Ա Ն Ա Ս Է Ի

Հանդէս հնախօսական, պատմական և քննական. կը հրատարակուի երեք ամիսն անգամ մը, տարեկան չորս գիրք:

Տնօրէն՝

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ

Կաշխատակցին ազգային և օտար արեւելագէտներ:

Տարեկան գինն է 20 ֆր.

Оттискованы в Н. Драгилевъ
Печатня «Орлеанъ» — Варна.

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ

Հաստատում 1898 Սեպտեմբեր 1 ին

ՎԱՌՆԱ

Կրթական Նախարարութեան 11128 թիւ արտօնադրով

Գ. ՏԱՐՆՇՐՋԱՆ

Կ'ընդունուին գիշերօթիկ աշակերտներ՝ գոհացուցիչ պայմաններով :

Առողջ սնունդ , կատարեալ մաքրութիւն եւ ընտանեկան խնամք :

Ուսմանց եւ գիտութեանց ամէն ճիւղեր կ'աւանդուին :

Օտար լեզուներէն պարտաւարիչ են պուլկարերէնը եւ ֆրանսերէնը : Փափաքողները կրնան հետեւիլ նաեւ անգլիերէնի կամ գերմաներէնի դասընթացքին :

Ձութակի եւ գաշնակի դասեր ալ կը արուին մասնաւոր վճարումներով :

Աւելի ընդարձակ տեղեկութիւններու համար՝ դիմել հիմնադիր-անօրէնին , հետեւեալ հասցեով՝

GRON MICAËLIAN

PENSIONNAT ARMÉNIEN

VARNA (Bulgarie)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Յ. Կ. ՊՕՆՃՈՒԿԵԱՆԻ

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Գ. ՏԱՐԻ

Նախօրգ տարիներու ուղղութեամբը գրուած՝ կը պարու- նակէ ազգային-պատմութեան վերաբերեալ շատ շահեկան եւ օգտակար կտորներ , ինչպէս են Գրաբար եւ Ոսկեգար , Հայոց հին կրօնքը , Աւետարը հին հայոց մէջ , Կիլիկիա , Շնորհալի , Հայ պատրիարքներ , Սահմանադրութիւն եւ այլն . խորագրով գրուիները :

Թուղթը շատ լաւ , ապագրութիւնը մաքուր : Գինն է 1 ֆր. — Բ. ՏԱՐԻին գինը 1 ֆր. — Ա. ՏԱՐԻինը 60 սանթ. :

Դիմել , յօրինողին սա հասցեով՝ J. G. BONDJOUKIAN,

VARNA, (Bulgarie).

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

«Վ Ա Ռ Ն Ա»

Երկրորդ քաղ, Շիրյեհասա փողոց, (Սագալլը չեշմէի կից)

Կը ապագրուին հայերէն, պուլխարերէն, դազղիերէն, յունարէն, տաճկերէն և այլ լեզուներով այցեատմ, հասցեատմ, հարսանեկան հրատիրագիր, ազգարարութիւն, նամակագրութիւն, պահարան, մահազդ, վաճառականական ամէն աեսակ գործեր, գիրք, լրագիր, և այլն:

Գունաւոր և ոսկեզօծ զարդագործերու համար ամէն լեզուէ ճոխ առուր և մասնաւր գործիքներ կը գտնուին:

ՄԵԾ ԽՆԱՄՔ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

ԳԻՆԵԲԸ ՅՈՅԺ ԳԻՒՐԱՄԱՏՅԵԼԻ

Ուրիւս քաղաքներէ եկած յանձնարարութիւններ նետութեամբ եւ փութով կը կատարուին:

IMPRIMERIE ORIENTALE

ONNIK PARSEGHIAN

II Outchast, rue Chiptchenska, VARNA (Bulgarie).

APHA
1894